ԽՈՍՔՆ ՈՒԺ ՈՒՆԻ. ԽԵԼԱՄԻ՛Տ ՕԳՏԱԳՈՐԾԻՐ ԱՅՆ

ԼՐԱՏՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԼԻԹՎԱՆԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ



AGAINST HATE SPEECH

Հրատարակող

ԼԻԲԵՐԱԼ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

կայք՝ https://liberalinstitute.am/
ֆեյսբուքյան էջ՝
https://www.facebook.com/YouthPoliticalEducation

Հեղինակ

ՄԵԴԻԱ
ՆԱԽԿԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ

Էջադրում և ձևավորում
Նորայր Բաղդասարյան

Շապիկի ձևավորում
Անի Միրիբյան

Խմբագիր
Աշոտ Մկրյան

Անգլերենի թարգմանիչ
Քրիստ Մարուքյան

Տառատեսակներ
Braind Yerevan, Montserrat arm, Vrdznagir, GHEA Mariam

Հրապարակման տարեթիվ
2023 թվական

Embassy of the
Kingdom of the Netherlands

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել **Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության դեսպանության** օժանդակությամբ՝ **«Ատելության խոսքի դեմ պայքար՝ հանուն ժողովրդավարական հասարակությունում բազմակարծության և հանդուրժողականության հաստատման»** ծրագրի շրջանակներում:

Ձեռնարկում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել «Լիբերալ քաղաքականության ինստիտուտ» ՀԿ-ի տեսակետների և դիրքորոշման հետ:

© Լիբերալ քաղաքականության ինստիտուտ, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. **Բովանդակություն** 4
2. **Ճանաչի՛ր և կանխի՛ր ատելության խոսքը մեդիայում** 5
3. **Մի քանի կարևոր հարց ու պատասխան մեդիայում ատելության խոսքի մասին**..... 6-14
   - 3.1. Ի՞նչ է ատելության խոսքը..... 6
   - 3.2. Ի՞նչ նկատի ունենք՝ մեդիա ասելով..... 7
   - 3.3. Ինչպե՞ս է մեդիան նպաստում ատելության խոսքի տարածմանը 8-10
   - 3.4. Ի՞նչ անել լրատվամիջոցներում ատելության խոսքի հանդիպելիս..... 10-11
   - 3.5. Ի՞նչ անել, երբ վտանգավոր բովանդակությունը սոցիալական ցանցերում է..... 12-14
   - 3.6. Արդյոք այս սահմանափակումները չե՞ն ոտնահարում խոսքի ազատության իրավունքը 14
4. **Մեդիայում ատելության խոսքի դրսևորման մի քանի օրինակ** 15-24
   - 4.1. Ատելության խոսքը քաղաքական պայքարի համատեքստում 15-17
   - 4.2. Անհանդուրժողականությունը ֆեյսբուքահայության քննարկումներում 17-18
   - 4.3. Ատելության խոսքից մինչև զանգվածային բռնություն և ցեղասպանություն..... 19-21
   - 4.4. Դավադրության տեսությունները ատելության խոսքի հիմքում 22-24
5. **Մի քանի հարց մեդիա նյութերը վերլուծելու համար**..... 25-26
6. **Մի քանի խորհուրդ մեդիագրագետ քաղաքացուն**..... 27-30
7. **Խաչբառ**..... 31-33
8. **Օգտակար նյութեր**..... 34-35

ՃԱՆԱՉԻ՞Ր ԵՎ ԿԱՆԽԻ՞Ր ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՄԵԴԻԱՅՈՒՄ

Ժամանակի զգալի մասը մենք անցկացնում ենք էկրանների առջև՝ թվային միջավայրում:

Այդ միջավայրը մաքուր, դրական և ներդաշնակ պահելը դարձել է ժամանակակից մեդիայի խնդիրներից մեկը: Անսահման հնարավորություններով հանդերձ՝ հաղորդակցության թվային դաշտը բերել է նաև սպառնալիքներ:

Ահռելի ծավալների հասնող ատելության խոսքը, թիրախավորումը, բռնության քարոզն ու վիրավորանքը մարտահրավերներ են ամբողջ աշխարհում: Մենք պետք է մեդիագրագետ լինենք առցանց վտանգներից խուսափելու և մեր մեդիամիջավայրն այնպես վերափոխելու համար, որ այն լինի առողջ բանավեճի, ազատ և պատասխանատու խոսքի, ապահով և հաճելի շփման տարածք, որտեղ կգործեն էթիկայի կանոններն և փոխադարձ հարգանքը:

Այս ուղեցույցը կօգնի մեդիամիջավայրում ճանաչել ատելության խոսքը, խուսափել դրանից և կանխել դրա տարածումը:

ՄԻ ՔԱՆԻ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՄԵԴԻԱՅՈՒՄ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է ատելության խոսքը

Ատելության խոսքի ընդգրկուն ու միջազգայնորեն ընդունելի ձևակերպում է տալիս **ՄԱԿ-ը՝ Ատելության խոսքի դեմ ռազմավարության և գործողությունների ծրագրում**, այն է՝ *«...ամեն տեսակի հաղորդակցություն՝ բանավոր, գրավոր և վարքային, որ պարունակում է նվաստացնող կամ հուրական խոսք, հարձակում որևէ անձի կամ խմբի վրա՝ նրանց ինքնության հատկանիշների՝ կրոնի, էթնիկ պատկանելության, ռասայի, ազգության, մաշկի գույնի, ծագման, գենդերի և այլ հիմքով»*:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ արգելված են ատելության խոսքը, խտրականությունն ու բռնության քարոզը և ՀՀ օրենսդրությամբ քրեորեն պատժելի հանցագործություններ են:

Ի՞նչ նկատի ունենք՝ մեդիա ասելով

Մեդիան հաղորդակցության այն միջավայրն է, որտեղ ստեղծվում ու տարածվում են տեղեկություններ, ուղերձներ, բովանդակություն:

Ավանդական զանգվածային լրատվամիջոցներից բացի՝ մեդիայի մաս են նաև ժամանակակից թվային հարթակները և դրանցում տարածվող նյութերը՝ **լուսանկարները**, **տեսանյութերը**, **մեմերը**, **երգերը**, **սթորիները**, **մեկնաբանությունները** և այլն:

Իհարկե, մեդիան լինում է նաև ոչ թվային՝ **գովազդային պաստառները**, **թերթերը**, **գրքերը**, անգամ **ժայռապատկերները**, որոնք փոխանցում են հազարավոր տարիներ առաջ ապրած մարդկանց ուղերձները:

Ժամանակակից հաղորդակցական միջավայրը, սակայն, գերազանցապես թվային է, որտեղ էլ առավել հաճախ ենք բախվում ատելության խոսքի ու բռնության կոչի դրսևորումներին:

Ինչպե՞ս է մեդիան նպաստում ատելության խոսքի տարածմանը

Տարբեր խմբերի մասին մեր պատկերացումները հաճախ կարծրատիպային են, հիմնված պատկերների և պատմությունների վրա, որոնք տեսնում ու լսում ենք մեդիայում՝ լուրերում, ֆիլմերում, ժամանցային հաղորդումներում, սոցիալական ցանցային նյութերում:

Օրինակ՝ սերիալներն ամրապնդում են այն կանխակալ պատկերացումը, որ կանայք վատ վարորդներ են, հումորային հաղորդումները տարածում են կարծրատիպեր Հայաստանի այս կամ այն մարզում ապրող մարդկանց մասին, տիկտոկյան տեսանյութերը գռեհկացնում են ազգային փոքրամասնությունների մասին հանրային ընկալումները և այլն: Այդ կարծրատիպերը վերածվում են նախապաշարմունքների, որոնք կարող են առաջ բերել թշնամանք, խտրականություն և ատելություն:

Ատելության խոսքը միայն բառերով չի արտահայտվում. այն կարող է դրսևորվել պատկերների, գրաֆիտիների, ծաղրանկարների, մեմերի, ժեստերի, սիմվոլների, երգերի ու տեսահոլովակների, անգամ առարկաների միջոցով:

Պատկեր 1 Ատելության խոսք պարունակող գրաֆիտի Ավստրալիայում «Ամո՛թ քեզ, Չինաստան, դեղին շներ, հեռացե՛ք տուն» գրառմամբ[1]:

Օրինակ՝ ձեռքով ցույց տրվող «OK» նշանը (👌) 2019 թ. ԱՄՆ-ում սկսում է համարվել ատելության խորհրդանիշ, քանի որ համացանցում ծայրահեղ աջական խմբավորումներն այն օգտագործում էին սպիտակ ռասայի գերակայությունը մատնանշելու համար: Նույն կերպ ֆաշիստական սիմվոլների տարածումը հրեաների դեմ հստակ ատելության դրսևորում է, ինչպես, օրինակ, «Գորշ գայլեր»-ի նշանը՝ հայերի պարագայում:

Այս և այլ խորհրդանշաններ հաճախ դառնում են մեդիայում տարբեր խմբերի դեմ ատելության արշավների բաղադրիչ, և սոցցանցերը ոչ միշտ են կարողանում արագ արձագանքել խնդրին:

---

[1] Պայմանավորված է Չինաստանում COVID-19 համավարակի սկզբնավորմամբ:

Ժամանակակից մեդիամիջավայրը հնարավորություն է տալիս բոլորին, այդ թվում և ծայրահեղական հայացքներով մարդկանց ու խմբերին, բովանդակություն ստեղծել, և արագացնում ու մեծացնում է այդ բովանդակության տարածումը:

Ի՞նչ անել լրատվամիջոցներում ատելության խոսքի հանդիպելիս

Եթե խնդրահարույց բովանդակություն տարածողը զանգվածային լրատվամիջոց է, ապա կարելի է զանգահարել խմբագրություն և քննարկել խնդիրը. գուցե սխալմունք է, որը հնարավոր է ուղղել:

Մյուս ճանապարհը **Լրատվամիջոցների էթիկայի դիտորդ մարմնին** դիմելն է. մեդիամասնագետներից կազմված այս մարմինը քննում է քաղաքացիների բողոքները և տալիս մասնագիտական եզրակացություն, որն ընդունում են կառույցին միացած մի քանի տասնյակ ԶԼՄ-ներ: Սրանք այն լրատվամիջոցներն են, որոնք ստորագրել են **«Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը»**՝ պարտավորվելով պահպանել մասնագիտական էթիկան, չքարոզել խտրականություն, անհանդուրժողականություն և հարգել այս կամ այն խմբի ներկայացուցիչների արժեքները:

Իհարկե, ատելության խոսքի տարածումը նաև քրեական հանցագործություն է, որի դեպքում կարելի է դիմել իրավապահներին:

Սկանավորի՛ր QR կոդը՝ «**Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրքի**» բովանդակությանը ծանոթանալու համար

https://ypc.am/self-regulation/#self-regulation-form

Ի՞նչ անել, երբ վտանգավոր բովանդակությունը սոցիալական ցանցերում է

Մեզ հայտնի սոցիալական ցանցերը (Ֆեյսբուք, Թվիթեր, Տիկտոկ և այլն) ունեն կանոններ և ուղեցույցներ, որոնք արգելում ու սահմանափակում են ատելության խոսքն իրենց հարթակներում: Արհեստական բանականության և մարդկանց օգնությամբ ցանցերը փորձում են գտնել և հեռացնել վտանգավոր բովանդակությունը, սակայն հաճախ թերանում են, հատկապես երբ գործ են ունենում քիչ տարածված լեզուների հետ[2]:

Ավելին՝ սոցցանցերը հաճախ մեղադրվում են ատելության խոսքը խթանելու համար, քանի որ ալգորիթմներն օգտատերերին առաջարկում են ամենաշատ քննարկված և մեկնաբանված նյութերը՝ բորբոքելով կրքերը:

---

[2] Հայերենը կարելի է դիտարկել այդ լեզուների շարքում:

Կարևոր է, որ օգտատերերը վտանգավոր բովանդակության հանդիպելիս հարթակի ադմինիստրացիային տեղեկացնեն այդ մասին, անհրաժեշտության դեպքում արգելափակեն էջերը:

Սոցցանցերում բողոք ներկայացնելու ընթացակարգերը շատ պարզ են և նման են իրար: Դիտարկենք «Մետա» ընկերությանը պատկանող Ֆեյսբուքի ընթացակարգը:

Ֆեյսբուքյան տիրույթում ցանկացած գրառման, լուսանկարի ու տեսանյութի մասին կարելի է բողոք (Report) ուղարկել՝ սեղմելով կախման կետերի նշանին:

Բացվող պատուհանում անհրաժեշտ է ընտրել **վտանգավոր բովանդակության տեսակը** (ատելության խոսք, ոտնձգություն, կեղծ տեղեկություն, մերկություն և այլն):

Ապա անհրաժեշտ է հստակեցնել, թե **ինչպիսի խտրականություն է ատելության խոսքի հիմքում** (ռասայական կամ ազգային պատկանելություն, կրոնական ուղղություն, սեռական կողմնորոշում, հաշմանդամություն և այլն):

Բողոքն արձանագրելով՝ Ֆեյսբուքը քննում է այն, ապա հեռացնում նյութը, եթե դրանում հայտնաբերում է **մարդկանց դեմ ագրեսիա, բռնություն, դեհումանիզացիա, նվաստացնող արտահայտություն, հայհոյանք և/կամ խտրականության կոչ:**

Նույն կերպ կարելի է բողոք ուղարկել անձնական կամ կորպորատիվ էջերի մասին, ինչպես նաև արգելափակել այդ էջերը՝ տարածվող բովանդակությունը չտեսնելու, նամակագրությունն արգելելու համար:

Արդյոք այս սահմանափակումները չե՞ն ոտնահարում խոսքի ազատության իրավունքը

Խոսքի ազատությունը մարդու հիմնարար իրավունքներից մեկն է, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում, երբ խախտվում են ուրիշների իրավունքները, և երբ պետական անվտանգության սպառնալիք կա: Իսկ ատելության խոսքը և այդ հիմքով կատարվող հանցանքները խախտում են անհատների ու խմբերի իրավունքները, անդորրը և վտանգում հասարակության ապահովությունը:

Իհարկե, երբեմն **ատելության խոսք** հասկացությունը չարաշահվում է լրագրողների, իրավապաշտպանների խոսքի ազատությունը հանիրավի սահմանափակելու, նրանց լռեցնելու համար: Կարևոր է, որ խոսքի ազատության սահմանափակումները բխեն ժողովրդավարության սկզբունքներից և հաշվի առնեն մարդկանց իրավունքները:

ՄԵԴԻԱՅՈՒՄ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՕՐԻՆԱԿ



Ատելության խոսքը քաղաքական պայքարի համատեքստում

Հայաստանի Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնարողովը 2022 թվականին բողոք է ներկայացնում ԶԼՄ էթիկայի դիտորդ մարմնին՝ Հ2 հեռուստալիքի հեռարձակած մամուլի ասուլիսում «Հայելի ակումբ»-ի ներկայացուցչի և հյուրերի հնչեցրած վիրավորանքի, խտրականության ու ատելության խոսքի վերաբերյալ: Քննելով բողոքը՝ Դիտորդ մարմինը հաստատում է, որ եթերում հնչել են **«քաղաքական հատկանիշներով խտրականություն, ատելության խոսք»**, և լրատվամիջոցներին հորդորում «հաշվի առնել երկրի ընդհանուր լարված մթնոլորտը, հետևել սեփական եթերներին և հնարավորինս բացառել ատելության խոսքի, բըռ-

նության կոչերի տարածումը հանրության շրջանում»:

Նույն «Մամուլի ակումբ»-ի՝ առցանց հարթակներում տարածվող տեսանյութերում, քաղաքական հայացքներով պայմանավորված, բազմաթիվ են վիրավորանքի ու ատելության խոսքի դրսևորումները: Օրինակ՝ նախկին պատգամավորներից մեկն ընդդիմությանը չսատարող մտավորականներին անվանում է **«Թուրքիայի «մտավորականների» կոշիկ լիզողներ»**, մեկ ուրիշը հայտարարում է, որ **«ժամանակն է կառավարության պատի տակ գնդակահարել»** վարչապետին:

Հատկապես 2021 թ. արտահերթ ընտրություններից առաջ ատելության խոսքի, վիրավորանքի ու բռնության կոչերի ականատես եղանք քաղաքական տարբեր ճամբարներից. Նիկոլ Փաշինյանը մուրճի ցուցադրությամբ **«պողպատե մանդատով»** էր սպառնում, խոստանում **«փռել ասֆալտին»**, թեկնածուներն իրար անվանում էին «դավաճան» ու «թուրք», կասկածի տակ դնում միմյանց «տղամարդկությունը»: «Freedom House» միջազգային կազմակերպության գնահատականով՝ քաղաքական կուսակցությունների այս գործողությունները **«նպաստում են հասարակության բևեռացմանն ու ատելության խոսքի տարածմանը»**:

Հետագայում, իր թույլ տված արտահայտությունների մասին պատասխանելով «Factor.am»-ի հարցին, Նիկոլ Փաշինյանն ասել է.

«Ինչ վերաբերում է ընդհանրապես բառապաշարին, կոնայնությանը և այլն, կարծում եմ՝ մենք բոլորս էլ պիտի մտածենք, որ մանավանդ մթնոլորտի բարելավման նպատակով, բոլորս էլ անելիք ունենք, այդ թվում՝ ես»:

Անհանդուրժողականությունը ֆեյսբուքահայության քննարկումներում

2017 թ. մեծ աղմուկ է բարձրանում «Մարաշլյան» լուսանկարչական ատելիեի՝ Ֆեյսբուքում տեղադրած լուսանկարի շուրջ, որում պատկերված էր հայ կինն իր սևամաշկ ամուսնու և երեխայի հետ: Բազմաթիվ գրառումներ են տարածվում՝ քննադատելով կնոջը, վիրավորելով նրան և ընտանիքին, նվաստացնելով սևամորթներին: Երևանի դպրոցներից մեկի ուսուցիչը Ֆեյսբուքում հրապարակային գրառում էր կատարել այն մասին, որ «օտարամոլ և պացիֆիստ հայերի դեմը պետք է առնել, որ չտարածվեն մեր ազգի գլխին», և սևամորթներին անվանել «բնազդներով ապրող և մտավոր ունակություններ չունեցող»:

Վիրավորական մեկնաբանությունների և թեժ քննարկումների ճնշման տակ՝ լուսանկարը հեռացվում է Ֆեյսբուքից:

Այս իրավիճակին արձագանքում է «Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության» կոալիցիան՝ այն համարելով **«ռասայական և ազգային պատկանելության հիմքով խտրականության դասական դրսևորում»**, որը **«պատմության մեջ հանգեցրել է աղետալի դեպքերի՝ ցեղասպանությունների, էթնիկ զտումների և այլն»**:

Սոցիալական մեդիան մեդիա է՝ անկախ նրանից, թե օգտատերերն ինչպես են ընկալում դրա էությունը: Իսկ ուսուցիչը հանրային անձ է, որը հսկայական պատասխանատվություն ունի. նա կրթում է ոչ միայն դպրոցական ծրագրերի միջոցով, այլև իր վարքով ու հանրային խոսքով: Կարևոր է, որ սոցիալական մեդիայի օգտատերերը, հատկապես հանրային անձինք, մտածեն մեդիայում իրենց խոսքի և վարքի հետևանքների ու ազդեցության մասին:

Ատելության խոսքից մինչև զանգվածային բռնություն և ցեղասպանություն

2017 թ. Մյանմայում ապրող **ռոհինջա իսլամադավան համայնքի դեմ զանգվածային բռնության ալիք է բարձրանում**. հազարավոր մարդիկ բռնաբարվում են, կտտանքների ենթարկվում ու սպանվում, ավելի քան 700.000 մարդ տեղահանվում է: Այս էթնիկ խմբին Մյանմայի իշխանությունները չեն ճանաչում. նրանք չունեն քաղաքացիություն և տարիներ շարունակ ենթարկվել են հետապնդումների ու ճնշումների:

«Amntesy International» միջազգային իրավապաշտպան կազմակերպության զեկույցի համաձայն՝ 2017-ի զանգվածային բռնություններին մեծապես նպաստել են Ֆեյսբուքում ռոհինջա ժողովրդի դեմ ատելության խոսքի և բռնության կոչերի արշավը. Մյանմայի ռազմական կառույցները և ծայրահեղական խմբավորումներն ամիսներ շարունակ դեհումանիզացնող նյութեր ու կեղծիք են տարածել այս հարթակում:

Զանգվածային բռնություններից փրկված ռոհինջա համայնքի ներկայացուցիչները 2021 թ. դիմում են դատարան՝ «Մետա» ընկերությունից պահանջելով 150 միլիարդ դոլարի փոխհատուցում:



© Tamara-Jade Kaz

Պատկեր 2 Ռոհինջա ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանության մեջ Ֆեյսբուքի մեղավորությունն ի ցույց դնող պաստառ «Amntesy International»-ի զեկույցից

«Մետա»-ն, որին պատկանում է Ֆեյսբուքը, ընդունում է, որ բավարար ջանք չի գործադրել բռնությունները կանխելու ուղղությամբ, ինչից հետո Մյանմայում բազմաթիվ ծայրահեղականների օգտահաշիվներ է արգելափակում և խոստանում ավելացնել ծրագրերն ու աշխատակիցների թիվը տեղի լեզուն ավելի լավ հասկանալու համար:

Մինչև սոցիալական ցանցերի ստեղծումը մեդիայի ավանդական տեսակները նույնպես օգտագործվել են՝ մարդկանց խմբերի միջև թշնամանք սերմանելու, տեղեկատվական պատերազմ

վարելու, անգամ ցեղասպանություն կատարելու համար: Հայտնի է, որ Ռուանդայում տուտսիների ցեղասպանությունից առաջ ազգայնականներն օգտագործել են տեղական թերթերն ու ռադիոն ատելություն սերմանելու, հութուներին տուտսի փոքրամասնության դեմ տրամադրելու և ցեղասպանական գործողությունների մեջ ներքաշելու համար. 1994 թ. 100 օրում ավելի քան 800.000 մարդ է սպանվել:

Դավադրության տեսությունները ատելության խոսքի հիմքում

2020 թ. քրեական գործ է հարուցվում «Վետո» շարժման հիմնադիր Նարեկ Մալյանի դեմ այն բանից հետո, երբ նա **կարմիր ներկ է լցնում «Բաց հասարակություններ» հիմնադրամի** (հայտնի է որպես «Սորոսի հիմնադրամ») գրասենյակի մուտքի մոտ՝ հայտարարելով. *«Այ էս արյունի մեջով ամեն օր գնալու եք՝ ձեր պիղծ գրանտները վերցնելու: Ես ամբողջ կյանքս ու ամբողջ գործունեությունս նվիրելու եմ՝ ձեր նման պիղծերին պատասխանատվության կանչելու, սատկացնելու: Մա՛հ դավաճաններին»*:

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա»-ի Վանաձորի գրասենյակի ղեկավար, իրավապաշտպան Արթուր Սաքունցը, որի բողոքի հիման վրա հարուցվել էր գործը, դատարանում հայտարարում է, որ Նարեկ Մալյանն իրավապաշտպանների հասցեին հնչեցրել է **բռնության, ատելության խոսք**, ընդհուպ մինչև **ֆիզիկական հաշվեհարդարի կոչեր**, բոլոր իրավապաշտպաններին անվանել **ազգի դավաճան,** կազմել «սորոսականների» ցանկեր և խոստացել հաշվեհարդար տեսնել նրանց հետ: Նարեկ Մալյանի դեմ այս գործը 2023-ի հունվարին դեռ քննվում էր դատարանում:

Ամերիկացի գործարար (ծագումով հունգարացի) Ջորջ Սորոսի անձի շուրջ հյուսված թեզերի

հիմքում դավադրության տեսությունն է՝ **չհիմնավորված, չապացուցված տեսություն մեծ դավադրության մասին**, իբրև թե Ջորջ Սորոսն ուզում է ոչնչացնել հայկական ազգային արժեքներն ու պետությունը, իսկ 2018-ի հեղափոխությունից հետո ընտրված իշխանություններին, նաև քաղաքացիական հասարակությանը ֆինանսավորում և կառավարում է Սորոսը այդ դավադրությունն իրականացնելու նպատակով:

© Miguel Villalba Sánchez

Պատկեր 3 Ջորջ Սորոսի անձի շուրջ հյուսված դավադրության տեսությունները պատկերող ծաղրանկարի օրինակ:

Իրականում Սորոսի մասին դավադրության տեսությունները սկիզբ են առել նրա հայրենիքից՝ Հունգարիայից, որտեղ քաղաքական շարժառիթներով ստեղծել են **Սորոսի թշնամական կերպարը**: Ապա այդ նույն թեզը շրջել է այլ երկրներում,

հանրությանը վախեցնելու և մանիպուլացնելու համար լայնորեն կիրառվել է, օրինակ, Ռուսաստանում, Թուրքիայում, Ադրբեջանում, որտեղ փակվել են ԲՀՀ գրասենյակները:

Հետաքրքիր է այն փաստը, որ միևնույն թեզերով հանդես են գալիս և՛ Հայաստանի, և՛ Ադրբեջանի «հակասորոսականները»: Մասնավորապես, Ադրբեջանում լայն ժողովրդականություն է վայելում այն համոզմունքը, որ Սորոսը ցանկանում է քանդել Ադրբեջանն ու իրենցից «խլել Ղարաբաղը» և այդ նպատակին հասնելու համար ֆինանսավորում է հայերին և Հայաստանի կառավարությանը:


EU vs DiSiNFO | NEWS & ANALYSIS | DISINFO DATABASE | STUDIES & REPORTS | LEARN | ABOUT | GUEST CONTENT

DISINFO: SOROS WANTS TO DESTROY ARMENIA THROUGH THE KARABAKH WAR

SUMMARY

The conflict in Karabakh is an attempt to liquidate Armenia. George Soros was behind the (election of) Armenian leader Nikol Pashinyan and their goal was that.

PUBLICATION/MEDIA

→ 1sargrad.tv (Archived)

Key | September 7, 2017 17:21 EXCLUSIVE

George Soros, Enemy of Azerbaijan

ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑ ՄԵԴԻԱ ՆՅՈՒԹԵՐԸ ՎԵՐԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մեդիագրագետ մարդը ցանկացած մեդիանյութ՝ գրառում, ֆիլմ, լուր, գովազդ, պաստառ, հաղորդում դիտելիս, լսելիս ու կարդալիս վերլուծում է ու հարցեր տալիս: **Հիշենք մեդիագրագիտության հինգ հարցերը, որոնք օգնում են վերլուծել տեղեկությունը:**

Ո՞վ է հեղինակը

Որևէ տեղեկության վստահելուց առաջ կարևոր է հասկանալ, թե ով է ասողը, գրողը, տարածողը, որքանով է նա իրավասու, իրազեկված այս կամ այն թեմայով տեղեկություն կամ մեկնաբանություն տարածելու համար, ինչ գիտենք այդ մարդու, կազմակերպության, լրատվամիջոցի մասին:

Ո՞րն է ասելիքը

Կարևոր է հասկանալ մեդիայի ուղերձը՝ վերլուծելով դրա շերտերը, դրանում եղած արժեքներն ու կարծրատիպերը, առանձնացնելով փաստերը կարծիքներից ու մեկնաբանություններից, գնահատող բառերից, էմոցիոնալ արտահայտություններից ու պատկերներից:

Ում է ուղղված ասելիքը

Եթե գիտենք, թե ում է թիրախավորում մեդիան յուրը, ավելի ակնհայտ են դառնում այդ լսարանի վրա ազդելու հնարքներն ու նպատակները: Երբ մենք ենք բով անդակություն փարաժողը, դարձյալ կարևոր է հիշել լսարանի մասին. արդյոք մեր ցևակերպումները չե՞ն վիրավորում որևէ մեկին:

Ինչ հնարքներ են օգտագործված

Մեդիաբովանդակությունը միշտ «փաթեթավորված» է գույներով, երաժշտությամբ, գրաֆիկական ցևավորմամբ և այլն. դրանք մեդիալեզվի անբաժան մասն են: Բայց երբ մեդիան լսարանին մանիպուլացնելու նպատակ ունի, դիմում է առավել ազդեցիկ հնարքների՝ սենսացիոն վերնագրեր, հուզիչ լուսանկարներ, դավադրության տեսություններ, պարկերի և խոսքի խեղաթյուրում և այլն:

Ինչ նպատակ ունի նյութը

Պարզելով, թե ով է նյութի հեղինակը, ինչ է ուզում ասել, ում է դիմում և ինչ հնարքներ է օգտագործել, պետք է փորձել հասկանալ, թե որն է նպատակը, ինչու է այս տեղեկությունը հաղորդվում հիմա, ինչ շահեր կարող են լինել այստեղ, ով կարող է լինել պատվիրատուն և ինչ հեղհանքներ կարող է ունենալ տեղեկությունը:

Մի քանի խորհուրդ մեդիագրագետ քաղաքացուն...

1

Ցանկացած տեղեկատվության վստահելուց առաջ **միացրո՛ւ քննադատական մտածողությունդ**, վերլուծի՛ր, փորձի՛ր գտնել տեղեկության սկզբնաղբյուրը, հասկանալ շարժառիթներն ու նպատակները: Մեդիագրագիտության հինգ հարցերը կօգնեն այդ գործում:

2

Քննի՛ր քո համոզմունքները: Դրանք հաճախ ձևավորվում են ուրիշների և մեդիայի ազդեցությամբ: Կարևոր է քննարկել և հասկանալ, թե մեր պատկերացումը այս կամ այն խմբի մասին որտեղից է գալիս, ինչ հիմքեր ունի, որքանով է կարծրատիպային ու արդյոք չի նպաստում անհանդուրժող ու խտրական վերաբերմունքի ձևավորմանը:

3

Կասկածո՛վ վերաբերվիր սենսացիոն արտահայտություններով, վիրավորական բառերով վերնագրերին, գռեհիկ ու ցնցող լուսանկարներին: Որակյալ լրատվամիջոցները, արհեստավարժ լրագրողները խուսափում են մարդկանց զգացմունքների հետ խաղացող հնարքներից: Եթե նյութը վախեցնող ու սարսափեցնող է, կամ հակառակը՝ կարծես քո սրտից լինի, գուցե մոլորեցնելու դիտավորություն ունի: Արժե կառավարել զգացմունքներն ու սթափ մտածել:

Լա՛վ մտածիր առցանց վեճերի մեջ մտնելուց առաջ: Եթե զրուցակիցդ ծանոթ է, ընկերդ է, ցանկալի է քննարկումը տեղափոխել ուրիշ տիրույթ, զանգել, հանդիպել, ավելի հանգիստ միջավայրում քննարկել խնդիրը: Եթե անծանոթ է, ապա ավելի ռիսկային է վիճաբանությունը, քանի որ չգիտես՝ դիմացինդ ով է, ինչ խնդիրներ ու նպատակներ ունի, որքանով է քննարկվող թեման զգայուն ու կարևոր նրա համար: Սոցցանցային մեկնաբանություններում գրեթե անհնար է անծանոթ մարդուն որևէ բան համոզել ու բացատրել, հետևաբար, ավելի լավ է խուսափել նման իրավիճակներից:

4

Զգուշացի՛ր անծանոթների նամակներից: Իհարկե լինում են դեպքեր, երբ սոցիալական մեդիայում ծանոթանում ենք, համագործակցում, ընկերանում, սակայն անծանոթներից եկած նամակները կարող են պարունակել համակարգչային վիրուսներ, ֆիշինգ՝ անձնական տվյալները կորզելու խաբեություն, կիբերբուլիինգ, կիբերհետապնդում, սպառնալիք և այլ վտանգներ: Անծանոթներից նամակ ստանալիս երբեք մի՛ սեղմիր հղումներին, մի՛ բաց ֆայլերը, մի՛ փոխանցիր անձնական տվյալներ:

5

Լա՛վ փակիր «դուռը»: Օնլայն տիրույթում օգտահաշիվների «կողպեքները» պիտի ամուր լինեն, այսինքն՝ պետք է ունենաս երկար, բարդ, չկրկնվող գաղնտաբառեր, ակտիվացնես երկփուլային նույնականացումը, պարբերաբար ստուգես գաղտնիության կարգավորումները:

6

Մի՛ արա որևէ բան օնլայն, որ չէիր անի օֆլայն:
Առցանց տիրույթում հեշտ է լինել «համարձակ»՝ վիրավորել, ծաղրել, նույնիսկ սպառնալ՝ մտածելով, թե այստեղ ամեն բան կարելի է: Վիրտուալ այս գործողություններն ազդում են իրական մարդկանց, իրական հարաբերությունների, իրական կյանքի վրա և կարող են ունենալ իրական հետևանքներ թե՛ քո, թե՛ մյուսների համար:

Առցանց վիրավորանքի ու ատելության խոսքի հանդիպելիս **ճի՛շտ արձագանքիր**: Վեճի բռնվելու փոխարեն պետք է գործուն քայլեր անել.

- բողոք ուղարկել սոցցանցային կանոնների խախտումների մասին, արգելափակել այդ բովանդակությունը տարածողի էջը՝ օգնելով նվազեցնել վտանգավոր բովանդակությունը,
- քննարկել խնդիրը վստահելի մեկի՝ ընկերոջ, ծնողի, ուսուցչի հետ, եթե այդ բովանդակությունը քեզ է թիրախավորում,
- ատելության խոսքը քրեական հանցագործություն է: Եթե քեզ ուղղված բովանդակությունը համարում ես վտանգավոր, ապա հարկավոր է դիմել նաև իրավապահներին:

ԽԱՉԲԱՌ

մի քանի հասկացություն ապելության խոսքի և մեդիայի մասին



Խաչբառի բանալիներ

1. Մարդկանց և մարդկանց խմբերի տարբերակումը՝ ազգային/էթնիկ պատկանելությամբ պայմանավորված:
2. Մարդկանց նկատմամբ տարբերակված վերաբերմունքը և իրավունքների սահմանափակումը՝ նրանց հայացքների և առանձնահատկությունների հիմքով:
3. Մարդու արժանապատվությունը ոտնահարող խոսք, արտահայտություն:
4. Առցանց տիրույթում մարդուն ծաղրելը, նվաստացնելը և սպառնալը:
5. Ըստ ՀՀ Սահմանադրության՝ դա մարդու իրավունքների և ազատությունների հիմքն է:
6. Ապացույցների ու փաստերի վրա հիմնված լուր:
7. Մարդու գնահատականն ու դատողությունը որևէ հարցի շուրջ:
8. Սոցիալական մեդիան օգտագործում է այդ բանաձևերը օգտատերերին հետաքրքրող բովանդակություն և թիրախային գովազդ առաջարկելու համար:
9. Մարդու ազատությունները, որոնք երաշխավորված են պետության կողմից և պաշտպանվում են օրենքով:
10. Մեդիաբովանդակության խեղաթյուրումը, որը լսարանին մոլորեցնելու միտում ունի:
11. Ուրիշների պատկերացումները, հայացքները և մոտեցումները հարգելն ու ընդունելը:
12. Ցանցային վարվեցողության և վարքագծի կանոններ, որոնց հետևելով՝ համացանցը

դարձնում ենք ավելի դրական ու անվտանգ միջավայր:

13. Այլ ազգերի, կրոնների, սոցիալական տարբեր խմբերի վերաբերյալ ընդհանրացված, քարացած պատկերացում և վերաբերմունք:
14. Այլոց դեմ խոր անարգանքի, նվաստացման, թշնամանքի դրսևորումը:
15. Առցանց տիրույթում ուրիշներին դիտավորյալ հունից հանելը, վիրավորելը, վեճի մեջ ներքաշելը:
16. Ոչ բարեկամական տրամադրվածություն և վերաբերմունք որևէ անձի կամ խմբի դեմ:
17. Մարդկանց տարբեր խմբեր՝ ազգային, կրոնական, սոցիալական, սեռական կողմնորոշման և այլ հիմքերով, որոնք հասարակության մեջ մեծ թիվ չեն կազմում:
18. Մարդ, որի մասնագիտությունն է բարձրաձայնել հանրության համար կարևոր խնդիրները և հաղորդել հավաստի տեղեկություններ:
19. Որևէ անձի կամ խմբի դեմ կիրառվող ագրեսիվ գործողություն, որ կարող է լինել հոգեբանական, ֆիզիկական, սեռական բնույթի:
20. Կեղծ լուր:

Խաչբառի պատասխանները տեսնելու համար **սկանավորի՛ր QR կոդը**:

Օգտակար նյութեր

1. Մեդիագրագետ քաղաքացու ուղեցույց, ՄՆԿ, ԱԳՆ, https://media.am/hy/lab/2022/05/02/32646/
2. Մեդիա ւգիտություն. մեդիագրագիտության առցանց դասընթաց, ՄՆԿ, https://elearning.media.am/course-category/մեդիա-ւգիտություն/
3. Մեդիագրագիտության, փաստերի ստուգման և թվային անվտանգության թեմաներով համակարգչային խաղեր, https://media.am/hy/medialiteracy/2020/05/02/21336/:
4. Ատելության խոսքի և խոսքի ազատության սահմանագիծը. որտեղ է սկսվում մեկը և ավարտվում մյուսը, ԼՔԻ, https://liberalinstitute.am/հրապարակումներ/:
5. Գրանիշեր: Ատելություն տարածող առցանց խոսքի դեմ պայքարը մարդու իրավունքների կրթության միջոցով, ԵԽ, https://rm.coe.int/168070b324
6. ՋԼՄ էթիկայի դիտորդ մարմին, https://ypc.am/hy/self-regulation/
7. Ֆեյսբուքի կանոնները ատելության խոսքի վերաբերյալ,
8. https://transparency.fb.com/policies/community-standards/hate-speech/
9. Խտրականությունը, ատելության հանցագործությունները և ատելության խոսքը Հայաստանում. տվյալների հավաքագրում: Իրավիճակի վերլուծության զեկույց, Ա. Ղազարյան, https://rm.coe.int/situational-analysis-armenia-hye/16809e49f2

10. Understanding Hate Speech, UN, https://www.un.org/en/hate-speech/understanding-hate-speech/what-is-hate-speech
11. We can!: Taking Action against Hate Speech through Counter and Alternative Narratives, COE, https://rm.coe.int/wecan-eng-final-23052017-web/168071ba08